ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով,134-րդ և 145-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 30.09.2022թ.-ի որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Սիլվա Սուրենի Մարկոսյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Ալխաս Ղազարյանը:

Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կից ներկայացվում են.

1. թեկնածուի առաջադրման վերաբերյալ խմբակցության 30.09.2022թ.-ի որոշումը,
2. թեկնածուի նույնականացման քարտի պատճենը,
3. թեկնածուի կենսագրությունը,
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու համար թեկնածուի՝ 30.09.2022թ.-ի գրավոր համաձայնությունը

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

03.10.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 134-րդ և 145-րդ հոդվածներով՝ խմբակցությունը որոշեց.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու առաջադրել Սիլվա Սուրենի Մարկոսյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Ալխաս Ղազարյանը:

3.Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

30.09.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Սիլվա Սուրենի Մարկոսյանս, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 4.1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍԻԼՎԱ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

30.09.2022թ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԻԼՎԱ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ծնվել է 1961թ. հունվարի 25-ին Երևանում:

1978թ-ին ավարտել է Երևանի թիվ 154 միջնակարգ դպրոցը:

1985թ-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրաէներգետիկայի ֆակուլտետը, ինժեներ:

1985-1990թթ. աշխատել է Երևանի Էլեկտրաշարժիչների գործարանում՝ ինժեներ:

1998-2002թթ. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

1998 – 2004թթ. աշխատել է ՀՀ Նախագահի աշխատակազմի, Հանրապետության Նախագահին առընթեր մարդու իրավուքների հարցերի հանձնաժողովում՝ գլխավոր մասնագետ:

2004-2008թթ. աշխատել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական:

2008-2009թթ. աշխատել է Շենգավիթ համայնքի ղեկավարի տեղակալ:

2009-2011թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ:

2002թ. մասնակցել է Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության ծրագրի օժանդակությամբ դասընթացին՝ «Համաձայնության հասնելու ուղի», Հարվարդի համալսարան, ԱՄՆ:

2003թ. մասնակցել է ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, դասընթացին ընտրական համակարգերի ուսուցանողների որակավորման «Աջակցություն ժողովրդավարական գործընթացներին Հայաստանում» ընտրություններ 2003թ. ծրագրի շրջանակներում:

2003թ. մասնակցել է Ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն Հայաստանի համար Միջազգային այցելուների ծրագրին, ԱՄՆ:

2006թ.-ից մինչ օրս ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացների ուսուցանող:

2011թ. հուլիսից մինչ օրս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

Ամուսնացած է ունի երկու երեխա և երեք թոռնիկ:

30.09.2022թ.